ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2017 թվականի N 75-Ա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 68-2.3-22) Նարինե Գրիգորյանին շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2017թ. հուլիսի 24
ք. Կապան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
Հ Ր Ա Մ Ա Ն	Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«___» _____2017թ. N ___ -Ն	«17» հուլիսի 2017թ. N 74-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 31-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝	ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 10-ի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստի և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» համատեղ թիվ 31-Ն հրամանի և թիվ 101-Ն որոշման մեջ (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունը.

Հրամանի N 2 հավելվածի 2-րդ սյունակի վերնագրի «գյուղական ամբուլատորիաներ և գյուղական առողջության կենտրոններ» բառերը փոխարինել «գյուղական ամբուլատորիաներ, գյուղական առողջության կենտրոններ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ ՊՈԱԿ-ներ և ՓԲԸ-ներ» բառերով:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
Հ Ր Ա Մ Ա Ն	Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«___» _____2017թ. N ___ -Ն	«17» հուլիսի 2017թ. N 74-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 31-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝	ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 10-ի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստի և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» համատեղ թիվ 31-Ն հրամանի և թիվ 101-Ն որոշման մեջ (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունը.

Հրամանի N 2 հավելվածի 2-րդ սյունակի վերնագրի «գյուղական ամբուլատորիաներ և գյուղական առողջության կենտրոններ» բառերը փոխարինել «գյուղական ամբուլատորիաներ, գյուղական առողջության կենտրոններ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ ՊՈԱԿ-ներ և ՓԲԸ-ներ» բառերով:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

11 07/17թN ԼԱ/05/8779-17

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Մարզային ենթակայության բժշկական կազմակերպությունների տնօրեններին ներկայացված մրցութային պահանջ/պայմանները հաստատվել են 2013թ. ՀՀ առողջապահության նախարարի և մարզպետների համատեղ հրամաններով, որոնց 2-րդ հավելվածի 2-րդ սյունակով սահմանվել են գյուղական ամբուլատորիաների և գյուղական առողջության կենտրոնների տնօրեններին ներկայացվող պահանջ/պայմանները, իսկ 3-րդ սյունակով կարգավորվում են բացառապես ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության ներքո գործող մի քանի ՊՈԱԿ-ների տնօրեններին ներկայացվող պահանջները:

2015թ. կառավարության նախաձեռնությամբ ՀՀ մարզպետարանների ենթակայության գյուղական ամբուլատորիաներ և գյուղական առողջության կենտրոններ ՓԲԸ-ները վերածվեցին ՊՈԱԿ-ների, և առաջացավ 2013թ. հաստատված համատեղ հրամանի կարգավորումների երկակի մեկնաբանության հնարավորություն: Քանի որ մարզերում առաջացան ՊՈԱԿ-ներ, որոնք 2013թ. դրությամբ պարզապես չկային, առաջացավ անհրաժեշտություն, որպեսզի մարզպետարանները նախաձեռնեին վերոնշյալ համատեղ հրամանների փոփոխություն, որպեսզի բացառվեին այդ համատեղ հրամանների երկակի մեկնաբանումները և պահպանվեր գյուղական ամբուլատորիաների և գյուղական

առողջության կենտրոնների տնօրեններին ներկայացվող հետբուհական կրթության պահանջի գաղափարախոսությունը, ինչը չի արվել մինչ օրս:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը մարզպետարանի համապատասխան կառույցներին, որպեսզի նախաձեռնեն համապատասխան փոփոխություններ վերոհիշյալ համատեղ հրամանում՝ նրա հավելված 2-րդի 2-րդ սյունակի վերնագրի «գյուղական ամբուլատորիաներ և գյուղական առողջության կենտրոններ» բառերը փոխարինելով «գյուղական ամբուլատորիաներ, գյուղական առողջության կենտրոններ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ ՊՈԱԿ-ներ և ՓԲԸ-ներ» բառերով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Հասմիկ Սարգսյան
Անձնակազմի կառավարման վարչություն
Հեռ՝ 56-50-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,16,, հուլիսի 2015 թվականի N 97 _Ա

Համատեղ որոշում

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 30-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2015թ. հուլիսի 16
ք. Սիսիան

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 31-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
23 սեպտեմբերի 2015 թ.
Պետական գրանցման թիվ 10015395

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ Ր Ա Մ Ա Ն	**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
17 հունիսի 2015 թ. N 29-Ն	16 հուլիսի 2015 թ. N 97-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 31-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի «ը» ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 10-ի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստի և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» համատեղ թիվ 31-Ն հրամանի և թիվ 101-Ն որոշման մեջ (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի հավելված N 2-ի 1-ին և 2-րդ կետերի 9-րդ ենթակետերում «չի լրացել թեկնածուի կենսաթոշակային տարիքը» բառերը փոխարինել «չի լրացել հավակնորդի 65 տարին» բառերով.

2) Հրամանի հավելված N 2-ի 3-րդ կետի 9-րդ ենթակետում «դիմողի» բառը փոխարինել «հավակնորդի» բառերով:

ՀՀ առողջապահության նախարար	ՀՀ Սյունիքի մարզպետ
Ա. Մուրադյան	Ս. Խաչատրյան